



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ №-15Լ

ԴԱՏԱՎՈՐԻ ՊԱՏՄՈՒՃԱՆԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 72-րդ հոդվածի երրորդ մասի 7-րդ կետը Հայաստանի Հանրապետության դատարանների նախագահների խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Հաստատել՝

ա) Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի դատավորի պատմուճանի նկարագրությունը՝ համաձայն հավելված 1-ի.

բ) Հայաստանի Հանրապետության վերաքննիչ և վարչական դատարանների դատավորի պատմուճանի նկարագրությունը՝ համաձայն հավելված 2-ի.

գ) Հայաստանի Հանրապետության առաջին ատյանի՝ ընդհանուր իրավասության, քրեական և քաղաքացիական մասնագիտացված դատարանների դատավորի պատմուճանի նկարագրությունը՝ համաձայն հավելված 3-ի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2008 թվականի հունվարի 1-ից:

Հայաստանի Հանրապետության
վճռաբեկ դատարանի նախագահ

Հ.ՄԱՆՈՒԿՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ
ԴԱՏԱՎՈՐԻ ՊԱՏՄՈՒՃԱՆԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ**

1. Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի դատավորի պատմուճանը (այսուհետ՝ Պատմուճան) լայն ձևվածքով երկար թիկնոց է՝ կարված բարձր որակի ասլասե կտորից՝ մուգ բալի գույնի, շատ քիչ զգալի նուրբ փայլով, քիչ ճմրթվող:

2. Պատմուճանի դիմացի մասը՝ կոճակափեշերը՝ սկսած ուսակարերից մինչև ներքև ձևավորված է 10 սմ լայնությամբ թավշյա կոճգամով, որի տակ թաքնված են կոճակները:

3. Պատմուճանի պարանոցը ձևավորված է մեծ ու լայն եզրեր ունեցող օձիքով, որը կարված է թավշյա (բարձրորակ, խիտ հյուսվածքով գործվածք) կտորից՝ մուգ բալի գույնի և եզրագծված նույն գույնի պարան-ժապավենով:

4. Պատմուճանի փողկապային մասը ծածկված է լայն ժանեկավոր եզրակալով, որը կարվում է կաթնագույն բնական մետաքսյա բարակ կտորից:

5. Պատմուճանի կոճակները տեսանելի չեն, թաքնված են կտորի տակ:

6. Պատմուճանի թևերը շատ լայն են և ազատ, դրանց եզրերը ձևավորված են 22 սմ լայնությամբ թավշյա թևքածալերով՝ մուգ բալի գույնի, որոնք հիմնական կտորից առանձնանում են պարանի տեսք ունեցող ժապավենով:

7. Պատմուճանի քղանցքը ձևավորված է 16 սմ թավշյա կտորով՝ մուգ բալի գույնի:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՔՆՆԻՉ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ
ԴԱՏԱՎՈՐԻ ՊԱՏՄՈՒՃԱՆԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ**

1. Հայաստանի Հանրապետության վերաքննիչ և վարչական դատարանների դատավորի պատմուճանը (այսուհետ՝ Պատմուճան) լայն ձևվածքով երկար թիկնոց է՝ կարված բարձր որակի ատլասե կտորից՝ սև գույնի, շատ քիչ զգալի նուրբ փայլով, քիչ ճմրթվող, որի պարանոցը ձևավորված է ուսակարերից սկսվող փոքր օձիքով:

2. Պատմուճանի դիմացի մասը՝ կոճակափեշերը՝ սկսած ուսակարերից մինչև ներքև ձևավորված են երկու լայն թավշյա (բարձրորակ, խիտ հյուսվածքով գործվածք) կտորներից: Դրանց միացման հատվածում կոճակները տեսանելի չեն, թաքնված են կտորի տակ:

3. Պատմուճանի ամբողջ դիմացի մասը՝ կոճակափեշերը, օձիքը և թևքածալերը կարվում են մուգ սև բարձրորակ թավշյա կտորից: Ատլասի և թավիշի միացման եզրերը ընդգծվում են նույն գույնի պարանի տեսք ունեցող ժապավենով:

4. Պատմուճանի փողկապային մասը ծածկված է նուրբ սպիտակ ժանեկավոր եզրակալով՝ կարված նուրբ սպիտակ բնական մետաքսյա կտորից:

5. Պատմուճանի թևքերը լայն են ու ազատ, եզրերը ձևավորված են 20 սմ լայնությամբ սև թավշյա թևքածալերով:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ՝ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ, ՔՐԵԱԿԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՎԱԾ
ԴՍԱՐԱՆՆԵՐԻ ԴՍԱՎՈՐԻ ՊԱՏՄՈՒՃԱՆԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ**

1. Հայաստանի Հանրապետության առաջին ատյանի՝ ընդհանուր իրավասության, քրեական և քաղաքացիական մասնագիտացված դատարանների դատավորի պատմուճանը (այսուհետ՝ Պատմուճան) լայն ձևվածքով երկար թիկնոց է՝ կարված բարձր որակի ատլասե կտորից՝ սև գույնի, շատ քիչ զգալի նուրբ փայլով, քիչ ճմրթվող, որի պարանոցը ձևավորված է տղամարդու վերնաշապիկին բնորոշ տիպօրինակ փոքր օձիքով՝ սև թավշյա (բարձրորակ, խիտ հյուսվածքով գործվածք) կտորից:

2. Պատմուճանի դիմացի մասը՝ կոճակափեշերը՝ սկսած ուսակարերից մինչև ներքև ձևավորված է 10 սմ լայնությամբ թավշյա կոճգամով, որի տակ թաքնված են կոճակները: Ուսակարերը զարդարված են բաց սեղմոններով:

3. Պատմուճանի ամբողջ դիմացի մասը՝ կոճակափեշերը, օձիքը և թևքածալերը կարված են մուգ սև բարձրորակ թավշյա կտորից: Ատլասի և թավիշի միացման եզրերը ընդգծվում են նույն գույնի պարանի տեսք ունեցող ժապավենով:

4. Պատմուճանի փողկապային մասը ծածկված է ճերմակ ժանեկավոր եզրակալով՝ կարված նուրբ սպիտակ բնական մետաքսե կտորից:

5. Պատմուճանի թևքերը լայն են ու ազատ, եզրերը ձևավորված են 15 սմ լայնությամբ սև թավշյա թևքածալերով: